



ԳՐԻԳՈՐ ԽԱՆՑՅԱՆ

(Ժողովրդական գրադար)

ՕՇԱԿԱՆԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Հայ ճարտարապետության նմուշների մեջ զարդ չէ նա, բայց իր մեջ կրող, իր ծածկի տակ հանգչող, ժողովրդի համար սուրբ դարձած և «այր մի» Մաշտոց-ի դամբարանով, Մեծ Մասիսի ու Արագածի հավիտենական հայացքի տակ իր ծաղկող ժողովրդի սիրով շրջապատված, դարձել է թանկ ու նվիրական: Ժիրիմներն անգամ մեր հանճարների ցրիվ են ժամանակի մեջ, անշոշափելի ու անտեսանելի, և հիշվում են միայն իրենց ազնիվ գործերով մեր բազմադարյան մատյաններում, արձանագրություններում: Բախտը սակայն լրիվ երես չէ թեքել մեզնից, անցյալից թողել է մեզ մատուցելը, որոնք իրենց վեհությամբ ու կատարելությամբ, գեղեցկությամբ ու իմաստությամբ լրացնում են մեր կորցրածի արժեքն ու դերը: Եվ իսկապես ինչպես չհամարել բախտավորություն, որ կան Երեւոյքն ու Գառնին, Գեղարդն ու Հոփսիսիմեն, Զվարթնոցն ու Դվինը, մագաղաթա մեր գրքերը, որոնց վրա Պիծակի ու Ռոսլիկի հոգու կնիքը կա, խաչքարերը Մոմիկ վարպետի քրտինքով կերտված: Սրանք մեկը մյուսի ետևից բաց են անում հեռավոր մշուշի մեջ կորած պատմության էջերը:

Կար մի դար ու թվական, երբ մեր ժողովուրդը մահու և կենաց պայքարի մեջ էր ազգային գոյատևության համար: 4-րդ դարի վերջում, 387 թվականին, Տիգրանի դաշնադրությամբ Հայաստանը բաժանված էր Հռոմեական Կայսրության և Պարսկաստանի միջև, մասնատված և ենթարկված կրոնական, տնտեսական, քաղաքական և մշակութային օտար ազդեցությունների: Պետք էր փրկել ազգային ինքնությունը և հարեհեքը կործանման վերահաս վտանգից: Պոետ Պարույր Սևակի խոսքերով ասած.

«Այսպես ծնվեց նա:

Բախտի հակառակ,

Թե վայրկենական նրա գոշումով,

Նա եկավ, որ մեզ վերադարձնի
Այն, ինչ խել էր նույն բախտը երեկ:
«Մաշտոց...

Այսինքն Այր մի, որ եկավ ապացուցե-
լու,

Թե մի տեղ վերջը դառնում է սկիզբ»:

Այս լուսավոր ու փառահեղ Այր-ի շիրիմն ունենալու պատիվը իր հողում ստանում է Օշականի տիրակալ իշխան Ամատունին: Պետք է ենթադրել մնացած հիմքերից, որ շիրմի վրա եղել է մատուռ կամ եկեղեցի, իսկ նորը, որի բեմի տակ գտնվում է դամբարանը, մոտ ժամանակների շինությունն է, ԺԹ դարո, ունի բազիլիք բնույթ, ի զարմանա մեզ, քանի որ շատ հեռու է այդ ժամանակներից:

Անցած 50 տարիների ընթացքում բազմաթիվ հուշարձաններ են վերականգնվել և այսօր էլ վերականգնվում են մեր պետության կողմից: Իսկ Ամենայն Հայոց Հայրապետի՝ Վազգեն Ա-ի գահակալության տարիներին նոր թափ ու որակ ստացան վերականգնման աշխատանքները նաև Մայր Աթոռի կողմից: Այս ազնիվ ու հարեհասիրական գործին իրենց ձեռքը մեկնեցին աշխատող մեկ ցրված մեր ազգի ներկայացուցիչները, նպատակ ունենալով թողնելու մի հուշ հարեհի հողում, մի պալատ գործ ի հիշատակ արված ու ավերված մի հարեհալան քաղաքի կամ գոհված հարազատների:

Երկու պատվական հայագիներ, Միսանից, ծնունդով երգնկազի Հալև և Թորգոմ Ղազարոսյաններն և հնդկահալ Պետրոս Ալեքսան սիրով վերցրին, առաջինները դամբարանի, եկեղեցու և շրջապատի ամբողջական վերանորոգման, իսկ երկրորդ՝ եկեղեցու որմնակարների ծախսերը: Այժմ աշխատանքներն ավարտված են և կարելի է որախությամբ նշել, որ այն դարձել է միաձուլ ոչ միայն վերանորոգման բարձր նաշակով ու որակով, այլև նպատակային



Ս. Սահակի, Վոլաճապուր թագավորի և Վահան Ամատունի իշխանի դիմանկարները
կենտրոնական որմանկարում



Սշականի եկեղեցու ս. Մեղանի Տիրամայրը

(Նկարիչ Հովհ. Մինասյան)



Օշականի եկեղեցու որմնանկարների հարավային կողմը



ՕՇԱԿԱՆԻ ԵԿԵՂԵՑՈՒ ՈՐՄԱՆԱԿԱՐՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՍԱՍԸ՝ Ս. ՍԱՀԱԿԻ ԵՎ
Ս. ՄԵՍՐՈՊԻ ՆԿԱՐՆԵՐՈՎ

իր էությունը, որին մեծապես օգնում են ներսում կատարված որմնակարները: Այս առիթով կցանկանալիք մի քանի խոսքով մասնագիտական բնութագրում տալ կատարված աշխատանքներին:



Օշականի եկեղեցու որմնակարների
հյուսիսային կողմը

Վերանորոգման աշխատանքների ժամանակ վար թափվեց հարթապատերի, ինչպես նաև որոշ պատերի ծեփը և նրա տակ հայտնաբերվեց շատ գեղեցիկ, մուգ մոխրագույն օխրաներով հարուստ տուփաքար շարվածքը, որը շատ օգնեց ներքին տարբեր նյութերի հարստությանը: Բեմի աջ և ձախ կողմերում կա երկու մուտք, աջակողմյանը տանում է ս. Մեսրոպ Մաշտոցի դամբարանը: Մուտքից ներս, տուփապատ բարձր կամարի տակ կանգնած է բազալտե խաչքար հիշեցնող մի հուշարձան, վրան երկաթագիր մեսրոպյան այբուբենը: Այս պարզ ու խիստ կոթողը թողնում է ազդու տպավորություն: Ապա մի քանի աստիճաններով իջնելուց հետո մտնում ենք դամբարանը: Այն լուսավորված է թույլ կանթեղի լույսով, ձախ կողմում ներքին լույսով ճառագում է մարմարյա շիրմաքարը՝ քերված մարմարի հանրահույս հարեանիք Իտալիայից, վրան փորագրված երկու համեստ տող.

«Սուրբ Մեսրոպ Մաշտոց
361—440»

Պատերը երեսպատված են հղկված բազալտով, ոչ մի շոգույթություն, ոչ մի ավելորդ խոսք. այս է առավելությունն ու արժեքը վերանորոգված դամբարանի: Այստեղից

դուրս եկողի առջև անմիջապես բացվում է որմնակարը իր երեք մասերով: Այս շնորհաատ գործի հեղինակներն են երիտասարդ նկարիչներ Հովհաննես Մինասյանը և Հենրիկ Մամյանը: Օգտվելով Ամենայն Հայոց Հայրապետի գրավիչ, բայց և դժվարին ու պատվավոր առաջարկից, շուրջ չորս տարի (1961—1964 թթ.) լարված ու քրտնաջան աշխատանք կատարեցին այն իրագործելու համար: Սկզբից նեթ խնդիրը պարզ էր. վեր հանել որմնակարում մաշտոցյան այբուբենի իմաստն ու դերը, երբ անցել է ստեղծման օրից 1600 տարի: Ժամանակի և տարածության մեջ ավելի շոշափելի էր դարձել նրա էությունը մեր ժողովրդի միասնության ու գոյատևման և մշակույթի հա-



Օշականի եկեղեցու որմնակարներից

մար: Այստեղից հասկանալի է, թե ինչու ստեղծագործողները նպատակահարմար են գտել, օգտագործելով նաև ճարտարապետական հնարավորությունները, ստեղծել եռանիստ պատկեր, որի կենտրոնական մասն

HA-9623





Օշականի եկեղեցու նորոգության բարերարներից
Ռազմուցյալ Թորգոմ Ղազարույան

է այբուբենի հրամցումը ժողովրդին, բազմակերպար կոմպոզիցիան։ Աջ թևում՝ գաղուն Հայաստանի, խորհրդանշան խաղաղության, աշխատանքի և բերրիության, ձախ թևի պատկերում՝ ուժի, անկախության, հայ-

անակարները, մանրանկարչությունը և հարթաքանդակները։ Իմ կարծիքով հեղինակները ճիշտ են վարվել, աշխատելով չհեռանալ վերը նշվածից, իմաստով հետ մնալ գործողությունը և ավելի համոզիչ ու հավաստի դարձնել դեպքերը, մինչդեռ մեկնաբանումը գործի խիստ համահունչ է մեր ժամանակում որակված մեծ գյուտի նշանակությամբ։ Նկարիչները կենտրոնական որմնանկարի ընդհանուր տրամադրության մեջ շեշտել են հանդիսավորություն, ներքին ոգեվորություն, երևույթը հասկանալու և գնահատելու ներհայեցողություն։ Դիտման ընթացքում կարծես հնչում է ականջիդ երգը «Օվսաննա», որն ինքնամոռացությամբ և սրտեռանդ երգում են երեխաներն, աշակերտները Մաշտոցի։ Կենտրոնական պատկերի ձախ կողմում կանգնած է ս. Մեսրոպը՝ պարզ ու հաստատ, շրջապատված երեխաներով և աշակերտներով։ Կենտրոնում հրաշալի օգտագործված է պատուհանը, որի ապակու վրա դրսից պաժժառ լույսով ողողված ճառագում է այբուբենը, խորհրդանշելով այն միտքը, թե մի լուս է սա. որ խավարում չունի։ Նա ճառագում է ամենուր՝

«Եղիցի՛ լոյս և եղև լոյս»

Այլ կողմում թագավոր Վռամշապուհն է, թագուհին, Ամատունի իշխանը և առաջին շարքում նստած է Սահակ կաթողիկոսը, ապա ժողովուրդ ու երեխաներ։ Իմ կարծիքով սա ամենալավ կտորն է պատկերի, կատարված ճաշակով ու մեծ վարպետությամբ, ոչ միայն կերպարների դասավորմամբ և գույների կոմպոզիցիայով, այլև գունային լուծմամբ։ Այս և հարուստ է, չնա-




Արձանագրություն՝ Օշականի եկեղեցու նորոգության
բարերարների

րենի կենսունակության խորհրդանշի։ Ընդհանուր առմամբ որմնանկարը իր ոճական առումով հիշեցնում է միջնադարյան որմ-



Արձանագրություն՝ Օշականի եկեղեցու նորոգության
բարերարների

յած դեկորատիվ լեզվին, առանձին անհատների բնութագրմամբ, հատկապես կցանկանալի նշել Վահան Ամատունի հազարապետի



Օջականի եկեղեցու ա. Սեդանը

լուսավոր ու ազնիվ հայացքը, թագուհու գթասեր ու հիացական դեմքը, ինչպես նաև ընդհանուր երազկոտ մտքերով լի մյուս կերպարները: Որմնանկարներն ունեն հաշերին հաստով՝ ընդհանուր տաք մոխրագույն երանգ, որի մեջ շատ գեղեցիկ հնչում են բաց-վարդագույն, կանաչավուն և կապտավուն գույները: Այս ամենը պատկերին հաղորդում են ընդհանուր ջերմություն, որն և նպաստում է ընկալման ցանկալի հուզականությանը: Լավ է օգտագործված որպես ճարտարապետական մոտիվ՝ Հռիփսիմեն աշից, իսկ ձախից՝ Կարմրավուն գորշ ծառերը, որ և հավասարակշռում են կոմպոզիցիայի երկու մասերը: Կցանկալի նշել լավ օգտագործված տեքստերը, որոնք օգնում և աշխուժացնում են պատկերը: Որմնանկարի աջ թևը, ինչպես ասացինք, Հայաստանի գարունն է, գարունը կյանքի և հավիտենականության: Այստեղ գերակշռում է կարմիրը, մեծապես օգնելով շատ պլաստիկ և ամփջական կոմպոզիցիային, տալով ուրախության ներքին արտահայտչականություն: Սրա դիմաց հզորությունն է, որտեղ արծիվը՝ սուր տեսողության, բարձր թռիչքի

և ուժի խորհրդանշանն է: Նրա կողքին հայրենապաշտպան զինվորներն են ռիթմիկ-շեշտված շարժումներով: Գունալիկ լուծումը վերը նշված խնդիրը հաստատելու առումով տարբերվում է նախորդ երկու մասնից իր կապույտների, կանաչների ավելի ամուր և հարուստ երանգներով:

Նոր սեղանը իր նյութով, ոճով և իր Աստվածամոր նկարով համահնչուն է ամբողջ եկեղեցու ճարտարապետական բնույթին:

Սխալված չենք լինի, եթե ասենք, որ այս աշխատանքը իր առկայությամբ լցրեց և ճախացրեց հանդիսավորությունն այն հուզիչ տրամադրության, որ համակում էր ամեն մի մարդու, ով այցելում էր դամբարանը սուրբ Մաշտոցի: Սա էլ քիչ կլիներ, եթե չնշեինք, որ այս մնայուն գործը գալիս է լրացնելու և շարունակելու հայ որմնանկարչության հրաշալի ավանդները: Հուսանք, որ սա մեր ժամանակներում առաջինը և վերջինը չի լինելու, և մենք բազում առիթներ ենք ունենալու այսպես ուրախությամբ, ի լուր մեր ժողովրդին, ավետելու մեր ազգային մշակույթը հարստացնող՝ մեծարվեստ ու մեծարժեք գործերի ի հայտ գալը: